

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԸՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԸՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-239 քաղաքացիական օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1086.1-ին հոդվածով.

**«Հոդված 1086.1.**

**Աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումը պետական բյուջեի միջոցների հաշվին՝ գործ հանդիսացող իրավաբանական անձի լուծարման կամ ֆիզիկական անձի գործունեության դադարեցման դեպքում**

1. Աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ ֆիզիկական անձի գործունեության դադարեցման դեպքում, եթե տուժողը չի ստանում սույն օրենսգրքի 1086-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վճարները՝ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի միջոցով:
2. Սույն հոդվածով նախատեսված հատուցումը կատարվում է դիմելուն նախորդած երեք տարիների համար միանվագ, և այնուհետ ամենամսյա վճարումների տեսքով:
3. Սույն հոդվածով նախատեսված հատուցման չափերը, կարգը և առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

